ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՏԻԳՐԱՆ ԲՅՈՒԶԱՆԴԻ ՓԱՆՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«18»«հունիսի» 2026 թվական N 1860 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունիսի 15-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Տիգրան Բյուզանդի Փանոսյանի (ՀԾՀ 3303760314 հասցե՝ ք.Գյումրի, Կոշտոյան փողոց, 14/5) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Տիգրան Բյուզանդի Փանոսյանի գույքահարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաք Գյումրի, Կոմսոմոլի 1/2 հասցեում գտնվող շինության համար:

Գյումրի քաղաքի Կոմսոմոլի 1/2 հասցեի շինության համար վճարման ենթակա գումարը 2026 թվականի մայիսի 25-ի դրությամբ կազմել է 941.948 (ինը հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է 620.926 (վեց հարյուր քսան հազար ինը հարյուր քսանվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 321.022 (երեք հարյուր քսանմեկ հազար քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարը հաշվարկվել է 2010-2020 թվականների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համանքապետարանի աշխատակազմի բյուջե եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված թիվ 296920709808142436 տեղեկանքը), հողի հարկի գծով՝ 14.658 (տասնչորս հազար վեց հարյուր հիսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է 9.869 (ինը հազար ութ հարյուր վաթսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 4.789 (չորս հազար յոթ հարյուր ութսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարը հաշվարկվել է 2012-2020 թվականների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համանքապետարանի աշխատակազմի բյուջե եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված թիվ 796833066948142322 տեղեկանքը):

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

01.01.2018 թվականին ուժի մեջ մտած և նույն պահին գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում՝

9) «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքը: Նույն պահին գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Օրենսգրքի՝ սույն հոդվածի 2-13-րդ մասերով սահմանված դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում նույն մասերով սահմանված ժամկետներում:

21.12.2017 թվականի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքի 112-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասում՝ 9-րդ և 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Համաձայն նույն օրենքի 111-րդ մասի 1-ին պարբերության 2-րդ կետի՝ Օրենսգրքի 444-րդ հոդվածում՝ 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: ...»

Նույն օրենքի 119-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 111-րդ հոդվածի 2-րդ կետը, 112-րդ հոդվածի 3-րդ կետը ուղղ. և 113-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և գործում են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

25.06.2019 թվականի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Նույն օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 444-րդ հոդվածի 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ ըստ անշարժ գույքի սեփականատերերի՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային զուտ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողներին հաշվառող մարմիններ ներկայացնելուն վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:»:

Համաձայն նույն օրենքի 71-րդ հոդվածի վերջին պարբերության ՝ սույն օրենքի 68-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն օրենքի 1-ին հոդվածը, 6-րդ հոդվածի 2-րդ կետը, 9-րդ և 10-րդ հոդվածները, 11-րդ հոդվածի 3-րդ կետը, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 15-րդ և 17-րդ հոդվածները, 18-րդ հոդվածի 1-ին կետը, 24-րդ, 27-րդ, 29-րդ և 30-րդ հոդվածները, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերը, 38-րդ, 48-56-րդ, 60-րդ, 63-67-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքը գործել է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկ վճարող են համարվում Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում. 1. շենքերը և շինությունները (այսուհետ՝ շինություններ):

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Ընդ որում՝ 1) շինությունների հարկման բազա է համարվում սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գույքահարկ վճարող ֆիզիկական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն և տարեկան հաշվարկները կարող են մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնել՝ 1) հարկվող օբյեկտ համարվող շինության համար՝ շինության գտնվելու վայրի հաշվառող մարմին:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով

համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1–ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ 1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի, «Գույքահարկի մաին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ հոդվածի 1-ին մասի, 5-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի 1-ին մաս, 10-րդ հոդվածի 1-ին մասի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 4–րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին,2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88–րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Տիգրան Բյուզանդի Փանոսյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել 956.606 (ինը հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է 630.795 (վեց հարյուր երեսուն հազար յոթ հարյուր իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 325.811 (երեք հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր տասնմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Քաղաքացի Տիգրան Բյուզանդի Փանոսյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Տիգրան Բյուզանդի Փանոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2026-06-18 10:48:37 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թվական, ք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» հունիսի 2026 թվականի №1861 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի №1815–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1296-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 15-ի №1815–Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված ավտոտնակին, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հ. Ղանդիլյան փողոց, 22/7 ավտոտնակ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-06; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» հունիսի 2026 թվականի N 1862-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԽՄԲԻ 2-ՐԴ ԵՆԹԱԽՄԲԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի <<Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 27-Ն հրամանով հաստատված կարգի 15-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ (այսուհետ՝ մրցույթ) 2026 թվականի օգոստոսի 3-ին, ժամը 11:00-ին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին.

1) օրենքով սահմանված կարգով՝

ա. կազմակերպել և իրականացնել մրցույթի նախապատրաստական աշխատանքները,

բ. սահմանված կարգի համաձայն ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթի վերաբերյալ հայտարարության հրապարակումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026-06-16 14:48:35 GMT+4
Ստեղծված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողի
2026 թվականի հունիսի 18-ի N 1862-L որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբի ներքոգրյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

N	Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը	Պաշտոնի անձնագրի ծածկագիր	Նշված թափուր պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների նկարագիրը	Նշված թափուր պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները	Պահանջվող փաստաթղթերը
1.	**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի տեղակալ**	2.2-1	11. Բաժնի պետի տեղակալը՝ 1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով, 2) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին, 3) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, 4) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, 5) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին, 6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը, 7) հարկերը և այլ վճարումները չվճարող անձանց մասին նախապատրաստում է տեղեկատվություն, 8) մասնակցում է քաղաքային ենթակայության հիմնարկների հաշվապահական հաշվետվությունների, հաշվեկշիռների, ֆինանսատնտեսական գործունեության քննարկմանը և ներկայացնում համապատասխան առաջարկություններ, 9) նախապատրաստում է ֆինանսական փաստաթղթեր, 10) իրականացնում է գանձապետական համակարգի հետ տարվող աշխատանքները, 11) բյուջեի նախագծի նախապատրաստման և կազմման աշխատանքների իրականացման ժամանակ համայնքային ենթակայության հիմնարկներին ցույց է տալիս մեթոդական օգնություն,	Բաժնի պետի տեղակալը՝ 1)ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ: 2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Եկամտային հարկի մասին», «Գույքահարկի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Գնումների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն. 3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, 4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, 5) տիրապետում է ռուսերեն լեզվին	**Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝** 1) գրավոր դիմում /ձևը լրացվում է տեղում/. 2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի (դիպլոմի) և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները. 3) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք. 4) հայտարարություններ /լրացվում են տեղում/. 5) 1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի. 6) անձնագրի պատճենը: **Փաստաթղթերը ներկայացնել անձամբ**

			12) իրականացնում է աշխատակազմի հաշվապահական հաշվառման վարումը, կազմում է վճարման փաստաթղթեր և հաշվետվություններ, 13) մասնակցում է աշխատակազմի կառուցվածքում և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու նախապատրաստական աշխատանքներին, 14) մասնակցում է համայնքային կազմակերպությունների բյուջետային հայտերի և ընթացիկ տարվա պահպանման ծախսերի նախահաշիվների կազմմանը, դրանց հաստատմանը և ընթացիկ փոփոխությունների ճշգրտմանը, 15) ապահովում է ամենօրյա գանձապետական մուտքերն ու ծախսերը, կազմում է եկամուտների ու ծախսերի պլան-կատարողականների վերաբերյալ հաշվետվություններ, համակարգում է համակարգչային բազաները, 16) իրավունք ունի համայնքային ենթակայության հիմնարկներից ու կազմակերպություններից ստանալ ֆինանսական տեղեկություններ, ծախսերի, նախահաշիվների, քաղաքի բյուջեն կազմելու և կատարելու համար անհրաժեշտ նյութեր ու տվյալներ, 17) մասնակցում է համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, աշխատակազմի քարտուղարի հրամանների, ոլորտին վերաբերող ծրագրային փաստաթղթերի, պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծերի սահմանված կարգով նախապատրաստման աշխատանքների կատարմանը, ներկայացնում է համայնքի զարգացման ծրագրի համապատասխան ոլորտի նախագիծը և մասնակցում համայնքային սեփականության գույքագրման աշխատանքներին, 18) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ: Բաժնի պետի տեղակալն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ: Ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 328.000 (երեք հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ:	(ազատ) :	
	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի տեղակալ	**2-2-8**	Բաժնի պետի տեղակալը՝ 1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով, 2) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին, 3) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, 4) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների	Բաժնի պետի տեղակալը՝ 1) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:	**Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝** 1) գրավոր դիմում /ձևը լրացվում է տեղում/.

			սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, 5) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին, 6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը, 7) իրականացնում է իրավաբանական անձանց հետ օրենքով սահմանված կարգով աղբահանության պայմանագրերի կնքման, վարձավճարների գանձման և բազայի հաշվառման հետ կապված աշխատանքները. 8) իրականացնում է համայնքի ղեկավարի որոշումների հիման վրա վարձակալության տրամադրվող գույքի և հողի օգտագործման պայմանագրերի պատրաստման, դրանց նոտարական վավերացման և վարձավճարների գանձման հետ կապված աշխատանքներ, 9) նախապատրաստում է բաժնի գործառույթներին առնչվող հարցերի վերաբերյալ սահմանված կարգով համայնքի ավագանու որոշումների նախագծերը, 10) կատարում է համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները, իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ այլ իրավական ակտերով նախատեսված աշխատանքներ, 11) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ: Բաժնի պետի տեղակալն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ: Ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 328.000 (երեք հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ:	2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, 4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, 5) տիրապետում է ռուսերեն լեզվին (ազատ) :	2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի (դիպլոմի) և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները. 3) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք. 4) հայտարարություններ /լրացվում են տեղում/. 5) 1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի. 6) անձնագրի պատճենը: **Փաստաթղթերը ներկայացնել անձամբ**
	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ	2.2-6	Բաժնի պետի տեղակալը՝ 1) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով, 2) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին. 3) անհրաժեշտության դեպքում, բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին, 4) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, 5) իրականացնում է քաղաքացիների դիմում-	Բաժնի պետի տեղակալը՝ 1)ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ: 2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին»,	**Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝** 1) գրավոր դիմում /ձևը լրացվում է տեղում/. 2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի (դիպլոմի) և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները. 3) արական սեռի անձինք ներկայացնում

			բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին, 6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը, 7) ՀՀ կառավարության սահմանած կարգով կատարում է համայնքի գլխավոր հատակագծի, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմման համար անհրաժեշտ աշխատանքներ, 8) սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական նախագծեր և ներկայացնում բաժնի պետին, 9) կատարում է համայնքի ղեկավարի կողմից սահմանած դեպքերում և կարգով միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին համայնքի բնակչության իրազեկման, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման և ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցման համար անհրաժեշտ աշխատանքները, 10) բաժնի պետի հանձնարարությամբ կազմակերպում է համայնքի կողմից կառուցվող կամ նորոգվող բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների, սանիտարական մաքրման կայանքների, ենթակառուցվածքների, ինչպես նաև համայնքի գերեզմանատների, բարեկարգման և կանաչապատման նախագծերի կազմման աշխատանքները, 11) կազմում է օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը, 12) կատարում է համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին, գոտիավորման այլ փաստաթղթերին, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանած պայմաններով, սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից համայնքի վարչական տարածքում գտնվող պետական և համայնքի սեփականություն համարվող հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու համար անհրաժեշտ աշխատանքներ և ներկայացնում բաժնի պետին, 13) սահմանված կարգով օգտագործման տրամադրվող և օտարվող հողամասերի մեկնարկային վարձավճարների ու գների սահմանման նպատակով կատարում է ուսումնասիրություններ և ներկայացնում առաջարկություններ, 14) մասնակցում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման աշխատանքների կատարմանը և օրենքով սահմանված կարգով ներկայացնում բաժնի պետին, 15) սահմանված կարգով կատարում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ	«Քաղաքաշինության մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, 3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը, 4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, 5) տիրապետում է ռուսերեն լեզվին (ազատ):	են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք. 4) հայտարարություններ /լրացվում են տեղում/. 5) 1 լուսանկար՝ 3x4 սմ չափսի. 6) անձնագրի պատճենը: **Փաստաթղթերը ներկայացնել անձամբ**

			հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքները. 16) սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանը իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին, 17) կազմում է կառուցապատողներին տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը, եզրակացություն է ներկայացնում ճարտարապետաշինարարական նախագծերի վերաբերյալ, 18) սահմանված կարգով նախապատրաստում և ներկայացնում է համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների,աշխատակազմի քարտուղարի հրամանների, ոլորտին վերաբերող ծրագրային փաստաթղթերի,պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծեր,կազմում է համայնքի զարգացման ծրագրի համապատասխան ոլորտի նախագիծը և մասնակցում է համայնքային սեփականության գույքագրման աշխատանքներին, 19)կատարում է համայնքի ղեկավարի, նրա տեղակալների և աշխատակազմի քարտուղարի հանձնարարականները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ, նախատեսված այլ աշխատանքներ, 20) իրականացնում է օրենքով, իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ: Բաժնի պետի տեղակալն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ: Ամսական պաշտոնային դրույքաչափը սահմանված է 328.000 (երեք հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ:		
Մրցույթն անցկացնելու օրը, ժամը, վայրը			**Փաստաթղթերի ընդունումը**		**Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը**
օրը՝ 2026 թվականի օգոստոսի 3-ին ժամը՝ 11:00 վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 Գյումրու համայնքապետարան 3-րդ հարկ, նիստերի դահլիճ			**Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (3-րդ հարկ. հեռ 0312-2-22-18, էլեկտրոնային փոստի հասցե՝ ashxatakazmgyumri@mail.ru), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (1-ին հարկ, հեռ.՝ 0312-49000-147): Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից**		**2026 թվականի հուլիսի 2-ը ներառյալ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» հունվարի 2026 թվականի N 1863 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱՃԱՊՁԲ-56/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱՃԱՊՁԲ-56/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով ՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ռուբեն Գևորգյան–Գյումրի համայնքի ղեկավարի օգնական,

Հանձնաժողովի անդամներ՝

2)Դմիտրի Մանվելյան –Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3)Դավիթ Հարությունյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

4)Վարդան Զարիֆյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

5)Հրաչիկ Վարդանյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Հանձնաժողովի քարտուղար՝

6)Անի Ավդալյան–Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» հունվարի 2026 **թվականի** N 1864 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱՃԱՊՁԲ-56/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԷԱՃԱՊՁԲ-56/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով կազմավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ռաֆայել Անանյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի պահեստապետ,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Անդրանիկ Մադոյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անի Ավդալյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» հունվարի 2026 թվականի N 1865 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԵՎ ՎԵՐԳԵՏՆՅԱ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի արտաքին լուսավորության ստորգետնյա և վերգետնյա ցանցի շահագործման և սպասարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Հանձնաժողովի նախագահ՝

   1) Ռուբեն Գևորգյան – համայնքի ղեկավարի օգնական,

   Հանձնաժողովի անդամներ՝

   2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

   3) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

   4) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

   5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

   Հանձնաժողովի քարտուղար՝

   6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» հունվարի 2026 **թվականի** N 1866 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԵՎ ՎԵՐԳԵՏՆՅԱ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով Գյումրի համայնքի արտաքին լուսավորության ստորգետնյա և վերգետնյա ցանցի շահագործման և սպասարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Անդրանիկ Զադրյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հարություն Մխիթարյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի տեղակալ,

գ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Արտուշ Ավագյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հուրիսի 2026 **թվականի** N 1867 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 1361-Ա, N 1362-Ա, N 1363-Ա, N 1364-Ա ԵՎ N 1365-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի N 169/14 հասցեի 1,53 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, 3,3 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին, Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1361-Ա, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի N 169/15 հասցեի 2,61 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շվաքարանը և պարիսպը, 20,7 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին, Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1362-Ա, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի N 169/11 հասցեի 2,6 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի պատը, 2,6 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին, Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1363-Ա, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի N 161/3 հասցեի 4,3 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի շինությունները, 4,3 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին, Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1364-Ա և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Յուրի Վարդանյան փողոցի N 169/10 հասցեի 7,59 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ավտոտնակը և պարիսպը, 11,3 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին, Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1365-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու նպատակով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի N 169/14 հասցեի 1,53 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, 3,3 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին, Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1361-Ա, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի N 169/15 հասցեի 2,61 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շվաքարանը և պարիսպը, 20,7 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին, Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1362-Ա, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի N 169/11 հասցեի 2,6 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի պատը, 2,6 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին, Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1363-Ա, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոցի N 161/3 հասցեի 4,3 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի շինությունները, 4,3 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին, Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1364-Ա և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Յուրի Վարդանյան փողոցի N 169/10 հասցեի 7,59 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ավտոտնակը և պարիսպը, 11,3 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացիներ Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին, Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին և Արաքսյա Հակոբի Ղևոնդյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1365-Ա որոշումների մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշումների 1-ին և 2-րդ կետերում «ընդհանուր համատեղ սեփականություն» բառերը փոխարինել «ընդհանուր բաժնային սեփականություն՝ յուրաքանչյուրին (1/4 մաս)» թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

2026-05-19 16:32:41 GMT+4
Հայաստանի Էլեկտրոնային Թվային Ստորագրություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2026 թվականի №1868 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի №1847-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1316-2026 թվագրմամբ), շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 18-ի №1847-Ա որոշմամբ պետական գրանցման ներկայացված բնակելի տանը և դրա փաստացի զբաղեցրած սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Թբիլիսյան խճուղի, 6-րդ փակուղի, 4 բնակելի տուն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հոկտեմբերի 2026 թվականի № 1869 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի №1758-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №Զ/1260-2026 թվագրմամբ), հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 10-ի №1758-Ա որոշմամբ օրինական ճանաչված և համայնքային սեփականություն համարված բնակելի տանը, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Ե. Լալայան փողոց, 2/22 բնակելի տուն
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026-10-19 11:41:33 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունվարի 2026 թվականի N 1870-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂԻ N3 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 3.32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (2.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գևորգ Սարգսյանին պատկանող Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղի N3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 3.32(երեք ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (2.5(երկու ամբողջ հինգ տասնորդական)քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն:

Քաղաքացի Գևորգ Սարգսյանը դիմել է նշված շինությունը օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2026GAPNLR ծածկագիրը և Գևորգ Սարգսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N5501 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Գևորգ Սարգսյանին պատկանող Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղի N3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 3.32(երեք ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (2.5(երկու ամբողջ հինգ տասնորդական)քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 5554(հինգ հազար հինգ հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ :
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2026-06-19 10:13:42 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունվարի 2026 **թվականի** N 1871 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՆԵՍՕՂԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 27 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՏԵՂԱԴԻՐՔԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հանեսօղլյան փողոցի N 27 հասցեի հողամասն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Մնացական Գորգիի Ավետիսյանին և Գայանե Հովհաննեսի Ավետիսյանին: Նշված հողամասը նախկինում չափագրման ժամանակ սխալ քարտեզագրման և տեղակապման պատճառով կադաստրային քարտեզում տեղադրվել ոչ ճիշտ տեղադիրքով, որի արդյունքում առաջացել է հողամասի տեղադիրքի և սահմանների ճշտման անհրաժեշտություն:

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, հողամասի ճշգրտված կողմնային չափերով, մակերեսներով և տեղադիրքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման 2-րդ հավելվածի 30-րդ կետի 2-րդ ենթակետի, 31-րդ կետի 2-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել «Դոկկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված, քաղաքացիներ Մնացական Գորգիի Ավետիսյանին և Գայանե Հովհաննեսի Ավետիսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հանեսօղլյան փողոցի N 27 հասցեի 08-001-0764-0121,0123 կադաստրային ծածկագրով հողամասի տեղադիրքը և հատակագիծը:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ վերը նշված հասցեի հողամասի տեղադիրքի, սահմանների ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026 թվական, քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2026 **թվականի** N 1872 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի № 1142-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի № 1172-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 208.0 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 107.2 քառակուսի մետր արտաքին (89.6 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» № 1172-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել՝ չափագրության մեջ տեղ գտած վիրպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 208.0 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 107.2 քառակուսի մետր արտաքին (89.6 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» № 1172-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում «208.0 (երկու հարյուր ութ ամբողջ)» բառերը և թվերը փոխարինել «126.69 (մեկ հարյուր քսանվեց ամբողջ վաթսունինը հարյուրերորդական)» թվերով և բառերով, «107.2 (մեկ հարյուր յոթ ամբողջ երկու տասնորդական)» բառերը և թվերը փոխարինել «67.53 (վաթսունյոթ ամբողջ հիսուներեք հարյուրերորդական)» թվերով և բառերով և «89.6 (ութսունինը ամբողջ վեց տասնորդական)» բառերը և թվերը փոխարինել «55.36 (հիսունհինգ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական)» թվերով և բառերով:

2. Գյումրի համայնքի ղեկավարի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի ապրիլի 16-ի № 1172-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2026 թվականի ապրիլի 10-ի № 1142-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Գևորգի Չախալյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026-06-19 12:53:48 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԶԱՐԶԱՆԴ ՖԱԲՐԻՑՈՒՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«19»«հունիսի»2026 թվական N 1873 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունիսի 17-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Զարզանդ Ֆաբրիցուսի Գրիգորյանի (ՀԾՀ 3410600361, հասցե՝ ք.Գյումրի, Կարեն Դեմիրճյան փողոց, 67) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Զարզանդ Ֆաբրիցուսի Գրիգորյանի գույքահարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաք Գյումրի, Կոմսոմոլի 1 հասցեում գտնվող շինության գույքահարկի համար:

Գյումրի քաղաքի Կոմսոմոլի 1 հասցեի շինության գույքահարկի համար վճարման ենթակա գումարը 2026 թվականի մայիսի 13-ի դրությամբ կազմել է 786.503 (յոթ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր երեք) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է 551.957 (հինգ հարյուր հիսունմեկ հազար ինը հարյուր հիսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ,

իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 234.546 (երկու հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարը հաշվարկվել է 2010-2020 թվականների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համանքապետարանի աշխատակազմի բյուջե եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված թիվ 296919652905154427 տեղեկանքը):

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

01.01.2018 թվականին ուժի մեջ մտած և նույն պահին գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում՝

9) «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքը: Նույն պահին գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Օրենսգրքի՝ սույն հոդվածի 2-13-րդ մասերով սահմանված դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում նույն մասերով սահմանված ժամկետներում:

21.12.2017 թվականի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքի 112-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասում՝ 9-րդ և 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Համաձայն նույն օրենքի 111-րդ մասի 1-ին պարբերության 2-րդ կետի՝ Օրենսգրքի 444-րդ հոդվածում՝ 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: ...»

Նույն օրենքի 119-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 111-րդ հոդվածի 2-րդ կետը, 112-րդ հոդվածի 3-րդ կետը ուղղ. և 113-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից և գործում են մինչև 2019 թվականի հունվարի 1-ը:

25.06.2019 թվականի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Նույն օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 444-րդ հոդվածի 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Օրենսգրքի 11-րդ (բացառությամբ Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի) և 12-րդ բաժիններն ուժի մեջ են մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: Օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ անշարժ գույքի հարկի հաշվարկման նպատակով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ ըստ անշարժ գույքի սեփականատերերի՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի (ըստ հողամասերի և (կամ) դրանց համապատասխան բարելավումների) ու դրանց համապատասխան կադաստրային արժեքների ու հաշվարկային զուտ եկամուտների վերաբերյալ տեղեկությունները հարկ վճարողներին հաշվառող մարմիններ ներկայացնելուն վերաբերող դրույթն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:»:

Համաձայն նույն օրենքի 71-րդ հոդվածի վերջին պարբերության՝ սույն օրենքի 68-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն օրենքի 1-ին հոդվածը, 6-րդ հոդվածի 2-րդ կետը, 9-րդ և 10-րդ հոդվածները, 11-րդ հոդվածի 3-րդ կետը, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 15-րդ և 17-րդ հոդվածները, 18-րդ հոդվածի 1-ին կետը, 24-րդ, 27-րդ, 29-րդ և 30-րդ հոդվածները, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերը, 38-րդ, 48-56-րդ, 60-րդ, 63-67-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վերոգրյալ իրավանորմերից հետևում է, որ «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-491-Ն օրենքը գործել է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկ վճարող են համարվում Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում. 1. շենքերը և շինությունները (այսուհետ՝ շինություններ):

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Ընդ որում՝ 1) շինությունների

հարկման բազա է համարվում սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գույքահարկ վճարող ֆիզիկական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն և տարեկան հաշվարկները կարող են մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնել՝ 1) հարկվող օբյեկտ համարվող շինության համար՝ շինության գտնվելու վայրի հաշվառող մարմին:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1–ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝ 1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.
4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի, «Գույքահարկի մաին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ հոդվածի 1-ին մասի, 5-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի 1-ին մաս, 10-րդ հոդվածի 1-ին մասի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ մասի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 4–րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին,2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88–րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Զարզանդ Ֆաբրիցուսի Գրիգորյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել է 786.503 (յոթ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր երեք) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է 551.957 (հինգ հարյուր հիսունմեկ հազար ինը հարյուր հիսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 234.546 (երկու հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Քաղաքացի՝ Զարզանդ Ֆաբրիցուսի Գրիգորյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Զարզանդ Ֆաբրիցուսի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2026-06-19 10:39:00 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թվական, ք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԶԱՐԶԱՆԴ ՖԱԲՐԻՑՈՒՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«19»«հոկտեմբեր» 2026 թվական N 1874 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունիսի 17-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Զարզանդ Ֆաբրիցուսի Գրիգորյանի (ՀԾՀ 3410600361, հասցե՝ ք.Գյումրի, Կարեն Դեմիրճյան փողոց, 67) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Զարզանդ Ֆաբրիցուսի Գրիգորյանի անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաք Գյումրի, Կոմսոմոլի փողոց 1 հասցեում գտնվող շինության համար:

Գյումրի քաղաքի Կոմսոմոլի փողոց 1 հասցեի համար վճարման ենթակա գումարը 2026 թվականի մայիսի 17-ի դրությամբ կազմել է 449.819 (չորս հարյուր քառասունինը հազար ութ հարյուր տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է 353.237 (երք հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր երեսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 96.582 (իննսունվեց հազար հինգ հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարը հաշվարկվել է 2021-2025 թվականների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համանքապետարանի աշխատակազմի բյուջե եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրված տեղեկանք):

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226 հոդվածի համաձայն՝ հաշվառող մարմինները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 224-րդ հոդվածի 1-ին մասի, 225-րդ հոդվածի 1-ին մասի, 226 հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Զարզանդ Ֆաբրիցուսի Գրիգորյանից հօգուտ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 449.819 (չորս հարյուր քառասունինը հազար ութ հարյուր տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է 353.237 (երք հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր երեսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 96.582 (իննսունվեց հազար հինգ հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Քաղաքացի՝ Զարզանդ Ֆաբրիցուսի Գրիգորյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Զարզանդ Ֆաբրիցուսի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2026-05-19 13:57:48 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թվական, ք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՆԱՀԻՏ ԿՈՐՅՈՒՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«19»«հունիսի»2026 թվական N 1875 – Ա

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող Ավետիս Առաքելյանս՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին «Ավետիս Գուրգենի Առաքելյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող համարելու մասին» թիվ 2488-Ա որոշմամբ սահմանված իմ լիազորությունների շրջանակում, 2026 թվականի հունիսի 17-ին, Գյումրի քաղաքում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Անահիտ Կորյունի Գասպարյանի (ՀԾՀ 8014690176, հասցե՝ ք.Գյումրի, Գարեգին Նժդեհ փողոց, 7/7) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Անահիտ Կորյունի Գասպարյանի անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել են սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաք Գյումրի, Գարեգին Նժդեհ փողոց 7/7 հասցեում գտնվող շինության համար:

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհ փողոց 7/7 հասցեի համար վճարման ենթակա գումարը 2026 թվականի մայիսի 17-ի դրությամբ կազմել է 423.461 (չորս հարյուր քսաներեք հազար չորս հարյուր վաթսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է 353.237 (երեք հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր

երեսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 96.582 (իննսունվեց հազար հինգ հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ: Գումարը հաշվարկվել է 2021-2025 թվականների համար (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համանքապետարանի աշխատակազմի բյուջե եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղական հարկերի և վճարների միասնական համակարգի կողմից տրված տեղեկանք):

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226 հոդվածի համաձայն՝ հաշվառող մարմինները՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինները, իրականացնում են անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավավելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 224-րդ հոդվածի 1-ին մասի, 225-րդ հոդվածի 1-ին մասի, 226 հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի, 56-րդ հոդվածի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 88-րդ հոդվածի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Անահիտ Կորյունի Գասպարյանից հօգուտ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել՝ 449.819 (չորս հարյուր քառասունինը հազար ութ հարյուր տասնինը) Հայաստանի Հանրապետության դրամ, որից ապառքը կազմում է 353.237 (երեք հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր երեսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժը՝ 96.582 (իննսունվեց հազար հինգ հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Քաղաքացի՝ Անահիտ Կորյունի Գասպարյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին, տրամադրելով՝ սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Անահիտ Կորյունի Գասպարյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2026-06-19 09:53:52 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թվական, ք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունիսի 2026 թվականի № 1876 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՑԻԿԻ ԽՃՈՒՂԻ 5/5 (ՎԿԱՅԱԿԱՆ №21042026-08-0020) ԵՎ ՀԱՑԻԿԻ ԽՃՈՒՂԻ 6/4 (ՎԿԱՅԱԿԱՆ №19082024-08-0042) ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Կարեն Սիմոնյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №8994-2026 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հացիկի խճուղի 5/5 (վկայական №21042026-08-0020) և Հացիկի խճուղի 6/4 (վկայական №19082024-08-0042) հասցեներում գտնվող անշարժ գույքերի միավորումից առաջացող անշարժ գույքը հասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Հացիկի խճուղի, 5 պահեստ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարեն Սիմոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026-06-19 15:21:02 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունիսի 2026 **թվականի** N 1877 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բռնցքամարտի դեռահասների 2026 թվականի հունիսի 21-27-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բռնցքամարտի ֆեդերացիայի 2026 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2026 թվականի հունիսի 19-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բռնցքամարտի դեռահասների առաջնությանը գործուղման ծախսերի 2026 թվականի հունիսի 21-27-ը Երևան քաղաք գործուղել 12 մարզիկի և 3 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միյան ճանապարհածախս) 45.000 (քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2026 թ.
հունվարի 19 N 1877 որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության բռնցքամարտի դեռահասների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/ մարզիչ	Անձնագիր	Սոցքարտ	Հաշվեհամար	Գումար
1.	Սուվարյան	Վահան	մարզիկ	AV0539452	2828120546	1570020874338700	3.000
2.	Ադամյան Ադամյան	Գոգի Մարգարիտա	Մարզիկ ծնող	AU0460124	6104920330	11800676228000	3.000
3.	Նանիջանյան	Սամվել	մարզիկ	AX0526186	3022120298	220064686409000	3.000
4.	Նազարյան	Յուրի	մարզիկ	AL0454963	1331130319	1510004755915971	3.000
5.	Առաքելյան	Արտուշ	մարզիկ	AO0465756	2628130041	2478902361660001	3.000
6.	Խաչատրյան Սերոբյան	Հովհաննես Մարիամ	մարզիկ ծնող	013623202	6508900536	220372721260000	3.000
7.	Յայլոյան	Գալուստ	մարզիկ		1623120292	11802071484600	3.000
8.	Շահնազարյան	Ասո	մարզիկ	AO0423896	1621130495	1570076080680800	3.000
9.	Ավետիսյան Ավետիսյան	Գրիգոր Շուռա	մարզիկ ծնող	AV0432485	2411890427	2477402954870030	3.000
10.	Հարությունյան	Գրիգոր	մարզիկ	AL0673381	2432100573	1570076080680800	3.000
11.	Հարությունյան	Նարեկ	մարզիկ	AL0673382	1524130060	1570086135961300	3.000
12.	Մկրտչյան	Արթուր	մարզիկ	AX0486968	1423120361	19300465533100	3.000
13.	Մկրտչյան	Ռուդիկ	մարզիչ	010760734	1411800303	1510038610110200	3.000
14.	Խզեյան	Հովհաննես	մարզիչ	010259604	2209910064	15100958849388	3.000
15.	Բաղդասարյան	Արմեն	մարզիչ	AR0572921	3604900190	19300670681900	3.000
Ընդամենը							**45.000**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունիսի 2026 թվականի N 1878-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 02-Ի N 1618 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, հիմք ընդունելով անշարժ գույքի առուվաճառքի 2026 թվականի փետրվարի 05-ի պայմանագիրը (գրանցված գրանցամատյանում թիվ 1392), որի հիման վրա Մ.Խորենաց փողոց N 8/10 հասցեի անշարժ գույքը պետական գրանցում է ստացել Հրանտ Արտավազդի Աթանեսյանի անվամբ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 17022026-08-0048) և հաշվի առնելով քաղաքացի Հրանտ Աթանեսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի մայիսի 15-ին N 7047 թվագրմամբ)՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի հուլիսի 02-ի «Քաղաքացի Բուրաստան Ազատի Հարությունյանին աստիճաններ կառուցելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Մովսես Խորենացու փողոց N 8/10 հասցեի 15.14 քառակուսի մետր մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1618-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետում «5 (հինգ)» թիվը և բառերը փոխարինել «10 (տասը)» թվով և բառերով և «27252 (քսանյոթ հազար երկու հարյուր հիսուներկու)» թիվն ու բառերը փոխարինել «54000» (հիսունչորս հազար) թվով և բառերով:

2. Սահմանված կարգով կնքել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2021 թվականի հուլիսի 20-ի պայմանագրի (գրանցված սեղանամատյանում թիվ 6933) 2-րդ մասի 2-րդ կետի և 5-րդ մասի 5.1. կետի փոփոխման վերաբերյալ համաձայնագիր՝ քաղաքացի Հրանտ Արտավազդի Աթանեսյանի անվամբ (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի առևտի և սպասարկման ոլորտի համակարգման բաժին):

3.Համաձայնագրի նոտարական վավերացման և գույքային իրավունքների պետական վերագրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Հրանտ Արտավազդի Աթանեսյանի միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Տիգրան Խաչիկի Սիմոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026-06-19 16:59:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

2026 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 19 >> հունիսի 2026 թվականի Ն 1879 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐԻԻ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱՐԻՆԵ ԳԱԳԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Նարինե Գագիկի Կարապետյանի 2026 թվականի հունիսի 18-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն - թանգարան >> համայնքային ոչ ատևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Նարինե Գագիկի Կարապետյանին ազատել զբաղեցրած պաշտոնից 2026 թվականի հունիսի 23-ից՝ լուծելով նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նարինե Գագիկի Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆԱԾ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 19 >> հունիսի 2026 թվականի N 1880 -Ա

ԿԱՐԻՆԵ ՌԱՖԻԿԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐԻԻ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Կարինե Ռաֆիկի Վիրաբյանի 2026 թվականի հունիսի 18-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Կարինե Ռաֆիկի Վիրաբյանին (ծնված՝ 1961 թվականի հունիսի 13-ին, նույնականացման քարտ՝ 005898564, տրված՝ 2017 թվականի հունվարի 18-ին՝ ՀՀ ոստիկանության 016-ի կողմից, հաշվառման հասցե՝ քաղաք Գյումրի, Վարդ բաղ 1 մ/շ, 1 թ/ղ, շ. 5, բն.22, հանրային ծառայությունների համարանիշը՝ 6314610338) 2026 թվականի հունիսի 23-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ մինչև 2027 թվականի հունիսի 13-ը:
2. Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Ռաֆիկի Վիրաբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի